Հավելված
ՀՀ փոխվարչապետի 919 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության համայնքներում բնակվող անձանց ծալովի մահճակալների տրամադրում սոցիալական աջակցության նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆոքրս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆորնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքրս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, քաղ. Երևան, Վիկտոր Համբարձումյան փողոց, 2 շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ՝ Մասիս, Արմավիրի մարզ՝ Արմավիր, Սյունիքի մարզ՝ Գորիս, Կոտայքի մարզ՝ Հրազդան, Վայոց ձորի մարզ՝ Արենի և Եղեգնաձոր խոշորացված համայնքներ, «Նագաշյան» մանուկների կենտրոն, «Թաքնված ճանապարհ» հասարակական կազմակերպություն՝ Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	11,350,000 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ՝ Մասիս, Արմավիրի մարզ՝ Արմավիր, Սյունիքի մարզ՝ Գորիս, Կոտայքի մարզ ՝ Հրազդան, Վայոց ձորի մարզ՝ Արենի և Եղեգնաձոր խոշորացված համայնքներ, Նագաշյան» մանուկների կենտրոն, «Թաքնված ճանապարհ» հասարակական կազմակերպություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	29.12.2023 թվական – 31.01.2024 թվական
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծալովի մահճակալների պատվիրում և մատակարարում՝ 11,350,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել սկսված՝ 29.12.2023 թվականից մինչև 31.01.2024 թվականը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Շարժական ծալովի մահճակալ ներքնակով- 450 հատ- 11,350,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ